

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Անթիլիաս, Լիբանան

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

ԱՌ

ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանդէն քրիստոնէական ջերմ սիրով, ազգային վառ ապրումներով ու հայրական օրհնութեամբ կ'ողջունենք ձեզ:


Ահաւասիկ դարձեալ հաւաքուած էք ազգային պահանջատիրութեան նոր մղում ու շեշտաւորում տալու վերանորոգ հաւատով ու ամուր յանձնառութեամբ: Մեզի համար սիրելի է ու ողջունելի մեր ժողովուրդի իրաւունքներուն հետապնդման նուիրուած եւ զօրեղ կամքով ու աննուան ռզիտով թրծուած որեւէ նախաձեռնութիւն: Այսպէս եղած է միշտ հայ դատի յանձնախումբերու աշխատանքը ամէ՛ն տեղ:

Արդարեւ, մօտէն ծանօթ ըլլալով անցնող տասնամեակներուն հայ դատի ուղղութեամբ ձեր առած քայլերուն ու նուաճած իրագործումներուն, ինչպէս նաեւ ներկայ դժուար պայմաններուն մէջ կատարուող հետեւողական ճիգին, կրնանք անվարան վկայել, որ դուք արժանի էք մեր ժողովուրդի բարձր գնահատանքին. որովհետեւ ինչ որ կը կատարէք մեր ժողովուրդի բռնաբարուած իրաւունքներու ձեռքբերման համար կը կատարէք՝ հեռու անձնական, կուսակցական ու շահադիտական մօտեցումներէ. կը կատարէք բարձրագոյն աստիճանի նուիրումով, խոր հաւատով ու գիտակից յանձնառութեամբ:

Ծանօթ ըլլալով ձեր գործունէութեան ու ներկայ աշխարհաբաղակական պայմաններուն, որոնք երբեք նպաստաւոր չեն հայ դատի հետապնդման աշխատանքներուն, կ'ուզենք կարեւորութեամբ ընդգծել, որ ազգային մեր պահանջատիրութիւնը իր բոլոր բնագաւառներով ու տարածքներով կը կարօտի վերանայման ու վերաթելորման՝ մարտավարական նոր մօտեցումներով ու առաջնահերթութիւններու վերադասաւորումով: Եթէ երէկ ցեղասպանութիւնը ու հատուցումն էր հայ դատի հետապնդման առանցքային նպատակը, այսօր նաեւ Արցախն է, որ մեզի համար պէտք է մնայ էական ու այժմէական: Սփիւռքը յատկապէս փուշ է Թուրքիոյ եւ Ազրպէյճանի աչքին. Սփիւռքը իրենց բռնով խանգարիչ է, Հայաստանին եւ մեր ժողովուրդին առնչուած իրենց հեռաւոր նպատակներուն: Այս մօտեցումը մեզ պէտք է մղէ կազմակերպչական նոր ուժ ու գործունէական նոր կենսունակութիւն տալու հայ դատի աշխատանքներուն:

ARMENIAN CATHOLICOSATE
OF CILICIA

Antelias, Lebanon



كاثوليكوسية
الأرمن الأرثوذكس
أنطلياس، لبنان

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵՇԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Անթիլիաս, Լիբանան

Վստահ եմք, որ յիշեալ եւ այլ յարակից հարցերը լայնօրէն պիտի քննարկուին ձեր կողմէ եւ ապա համապատասխան աշխատանքի ուղեգիծ պիտի նշուի:

Այս առիթով, Մեր ջերմ գնահատանքը կը յայտնենք հայ դատին հետ ինքզինքն նոյնացուցած եւ այս ուղղութեամբ կեդրոնական դեր կատարած Տիար Յակոբ Տէր Խաչատուրեանին: Մեր բարձր գնահատանքը կը յայտնենք հայ դատի բոլոր յանձնախումբերուն եւ բոլոր անոնց, բարեկամ թէ բարերար, որոնք զանազան կերպերով իրենց մասնակցութիւնը կը բերեն մեր ժողովուրդի արդար իրաւունքներու հետապնդման ծրագիրներուն:

Հայրական սիրոյ ջերմ ողջունիւ,

Աղօթարար՝

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵՇԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

24 Սեպտեմբեր 2026
Անթիլիաս, Լիբանան